ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Beeline 2014

Beeline®

Ընկերության մասին

Beeline-ը (ապրանքանիշը՝ Beeline) Հայաստանի խոշորագույն ինտեգրված հեռահաղորդակցության ընկերությունն է: Հիմնադրվել է 1995թ-ի մարտ ամսին ամերիկյան Trans-World Telecom ընկերության հետ համատեղ: 2006թ-ի նոյեմբերի 3-ից աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկի՝ «Վիմպելկոմ Լթդ» Ընկերությունների խմբի մի մասն է:

Տվյալներ Ընկերության ծառայությունների մասին

- GSM 900/1800 և 3G (UMTS) ստանդարտ շարժական կապ Հայաստանի ողջ տարածքում, ամրակցված հեռախոսակապի ծառայություններ,
- ինտերնետի հասանելիություն CDMA, ADSL և FTTB տեխնոլոգիաներով,
- ՀՀ-ում 3G երրորդ սերնդի բջջային ցանցը շահագործած առաջին բջջային օպերատոր.
  - Beeline-ի 3G ցանցն ընդգրկում է Հայաստանի ավելի քան հարյուր հիսուն բնակավայր՝ 2.9 միլիոն բնակչությամբ,
- 1 Գբիթ/վրկ թողունակությամբ Beeline հուսալի CDN ենթակառուցվածք,
- 100% թվայնացված հեռախոսակապ Երևանում,
- 87%-ը գերազանցող թվայնացման ցուցանիշ ՀՀ-ի ողջ տարածքում,
- ավելի քան 8500 կմ երկարությամբ լարային ենթակառուցվածք:

2014թ-ին Beeline-ն արժանացավ հինգ պատվավոր մրցանակների, որոնք խորհրդանշում են տարվա ընթացքում ընկերության ունեցած ավանդն ու ձեռքբերումները տարբեր ոլորտներում: 2014թ-ի սեպտեմբերին «Երկրները մեկ հարկի տակ» հինգերորդ ամենամյա փառատոնի և գործարար համաժողովի շրջանակում Beeline-ը ճանաչվեց «Կապի ոլորտի առաջատար» և արժանացավ լավագույնի կոչմանն «Օտարերկրյա ներդրող» անվանակարգում:

Հոկտեմբերին Beeline-ն արժանացավ «Հեռահաղորդակցության առաջատար օպերատոր» կոչմանը «Տարվա լավագույն հանրային ծառայող և տարվա լավագույն ապրանքանիշ» յորրորդ ամենամյա ազգային մրցանակաբաշխության շրջանակում: Պատվավոր մրցանակը տրվեց «Համազգային վստահություն» խորհրդի կողմից ֆիքսված բջջային ու ինտերնետ կապի ծառայությունների և սպասարկման որակի համար:

Դեկտեմբերին Beeline-ը Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից արժանացավ «Էկոլոգիապես ամենապատասխանատու ընկերություն» կոչմանը՝ Հայաստանում «Կանաչ անտեսության» խթանման, լավագույն փորձի, «կանաչ» ծրագրերի իրականացման և դրանց շարունակական աջակցման համար:

Տարեվերջին ընկերության Գլխավոր տնօրեն Մեդրեյ Պյատախինը «Համազգային վստահություն» խորհրդի կազմակերպած «Վստահության վարկանիշ 2014» կոնտենտ վերլուծության շրջանակում արժանացավ «Տարվա լավագույն ղեկավար» կոչմանը: Պատվավոր մրցանակը շնորհվեց «Համազգային վստահություն» խորհրդի կողմից՝ 2014թ-ին Beeline ապրանքանիշի նկատմամբ վաստակած համակրանքի և վստահության համար:

Beeline-ի ձեռքբերումները 2014թ-ին

- Հեռահաղորդակցության ոլորտի առաջատար օպերատոր,
- առաջատար ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների ոլորտում,
- սակագների նշանակալի նվազեցում,
- առաջատար MNP ծառայության միջոցով տեղափոխված բաժանորդների թվով.
  - Հայաստանում (MNP) մեկնարկից ի վեր Beeline-ի ցանց է անցել ավելի քան 6000 հաճախորդ,
- IPTV ինտերնետային հեռուստատեսության գործարկում.
  - IPTV ծառայությունը հասանելի է Հայաստանի Beeline ֆիքսված կապի բաժանորդների գրեթե 80 տոկոսին,
- 12% աճ բջջային սեգմենտում.
  - ավելի քան 777 000 բջջային կապի բաժանորդ,
- 2014թ-ի ներդրումների ծավալը 3մլն-ով գերազանցում է 2013թ-ի ներդրումները,
- 14 մլրդ դրամը գերազանցող հարկային վճարումներ,
- հաճախորդների սպասարկման որակի ցուցանիշի (NPS) ռեկորդային աճ.
  - ցուցանիշը 2013թ-ի համեմատ ավելացել է 13-% ով,
- Հայաստանի 16 բնակավայրերի հեռախոսային ցանցի թվայնացում.
  - մոնտաժվել է ավելի քան 3500 հեռախոսագիծ և լայնաշերտ ինտերնետի ծառայությունների ավելի քան 1000 նոր պորտ,
- ռեկորդային թվով GSM և 3G ցանցերի բազային կայանների տեղադրում Հայաստանի ողջ տարածքով,
- FTTB տեխնոլոգիայով օպտիկամանրաթելային գերարագ ինտերնետ ծառայության գործարկում,
- 2014թ-ին իջեցվել են ֆիքսված կապի սակագները,
- Beeline-ը հանդիսանում է Հայաստանի խոշոր հարկատուներից և գործատուներից մեկը,
- Beeline-ն այսօր Հայաստանում ունի ամենախոշոր վաճառքի և սպասարկման գրասենյակների սեփական ցանցերից մեկը: Beeline-ը հատկապես կարևորում է սպասարկման որակի բարելավումը, ինչի շնորհիվ հաճախորդները կարող են միանալ Beeline-ին և օգտվել պարզ ու հարմար ծառայություններից ավելի հարմարավետ պայմաններում,
- Beeline-ի թիմը միշտ ստեղծում է այն նոր գաղափարների նախաձեռնությունների իրականացմանը, որոնք օգնում են մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը,
- Beeline-ը հպարտանում է սեփական կորպորատիվ համալսարանով, աշխատակիցների կարիերայի աճի ու զարգացման հնարավորություններով:

ՆՊՄ՝ նվիրվածություն, պատասխանատվություն, սեր

Ավելի քան 2500 աշխատակից յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ աշխատում է Beeline-ի բաժանորդների համար՝ նպատակ ունենալով մատուցվող ծառայությունները դարձնել հնարավորինս պարզ ու հարմար և ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուր բաժանորդի: Այսօր դեռևս շատ հարցեր կան, որոնք ունեն բարելավման կարիք, սակայն մենք շարունակաբար աշխատում ենք այդ ուղղությամբ և կշարունակենք աշխատել այնքան ժամանակ, մինչև կդառնանք ամենահաճախորդամետ օպերատորը շուկայում:

Հայաստանում Beeline–ի Գլխավոր Տնօրեն Մնդրեյ Պյատախին

Հաճախորդների սպասարկման որակի բարձրացման հետ կապված ռազմավարությունը Beeline-ը որդեգրել է 2013թ-ի աշնանը, որի շրջանակում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ: Ցանկացած բաժանորդ, որը գործարք է կատարում Beeline-ի վաճառքի և սպասարկման գրասենյակներում կամ զանգահարում հաճախորդների սպասարկման կենտրոն, ստանում է SMS հաղորդագրություն: Դրա միջոցով բաժանորդը 0-10 բալանոց սանդղակով գնահատում է ընկերության ծառայությունները:

Միայն վերջին 6 ամիսների ընթացքում՝

- իրականացվել է ավելի քան 7300 զանգ հաճախորդներին՝ նրանց խնդիրների լուծմամբ,
- ավելի քան 6100 SMS հաղորդագրություն հաճախորդներից՝ գովեստի կամ դժգոհության խոսքերով,
- ավելի քան տասնյակ ընթացակարգային բարեփոխումներ,
- հաշվի լիցքավորման ժամկետի վերացում,
- սպամի (անցանկալի SMS-ների) նվազեցում և վերահսկողություն,
- գրասենյակներում հերթերի նվազեցում և վերահսկողություն,
- սպասարկման կենտրոնում զանգերի սպասելաժամանակի կրճատում,
- գնային հստակ և կայուն քաղաքականություն:

0-10 սանդղակով մեր աշխատանքի գնահատում
Գնահատականների վերլուծություն
Հետադարձ կապ բոլոր դժգոհ հաճախորդների հետ
Դժգոհ հաճախորդների արձագանքների հավաքագրում
Դժգոհությունների վերացման, կազմակերպության բարելավման աշխատանքներ
Հետադարձ կապ հաճախորդի հետ՝ կատարված աշխատանքի արդյունքներով
Մեր հաճախորդը

Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը

Որպես Հայաստանի խոշորագույն հեռահաղորդակցության ինտեգրված օպերատոր և սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ Beeline-ը շարունակական աջակցություն է ցուցաբերում հասարակության մեջ առկա տարբեր խնդիրների լուծմանը՝ իր ներդրումն ունենալով բարեկեցիկ ապագայի կերտման գործում: Ընկերությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ռազմավարությունն իրականացնում է «Beeline-ն օգնում է մարդկանց կյանքը դարձնել ավելի լավը» խորագրի ներքո: ԿՍՊ նշանակալի ուղղությունները սահմանելու համար Beeline-ն ուսումնասիրում է հասարակական պահանջները, հաղորդակցվում է առաջնորդների, պետական ներկայացուցիչների հետ՝ երկրում առաջնահերթ և հրատապ սոցիալական հարցերի լուծման մեջ իր ներդրումն ունենալու համար: Սոցիալական ռազմավարության իրականացման հարցում Beeline-ը հավատարիմ է ընտրված ուղղություններին, իսկ սոցիալապես պատասխանատու մոտեցումը ընդգրկված է ընկերության բիզնես գործընթացներում:

2014թ-ին Beeline-ի ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են մարզերը: Հայաստանի Հանրապետությունում չի եղել որևէ մարզ, որտեղ Ընկերությունը հանդես չգա որևէ բարեգործական կամ օժանդակող նախաձեռնությամբ:

ԿՍՊ հաշվետվության մասին

Հաշվետվությունն ընթերցողին ծանոթացնում է Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությանը, դրա առանցքային ուղղություններին և 2014թ-ին իրականացված նախագծերին՝ ներկայացնելով դրանց արդյունավետությունն առկա խնդիրների լուծման գործում:

Հաշվետվությունը նպատակ ունի ապահովել թափանցիկություն Ընկերության բիզնես գործընթացների, հասարակական գործողությունների և շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության սկզբունքների վերաբերյալ:

2014թ-ի Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններն են՝



Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության զեկույց

Կրթություն

Այսօր առավել քան երբևիցէ անգնահատելի է կրթության դերը ժամանակակից աշխարհում: Որպես պատասխանատու ընկերություն՝ մենք շարունակում ենք աջակցել կրթական ծրագրերի իրականացմանը և խրախուսել հայ երիտասարդներին իրենց սեփական ուժերով հասնել հաջողության և կյանքը դարձնել ավելի լավը:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն
Մնդրեյ Պյատախին

Կրթության ոլորտում Beeline-ի իրականացրած ծրագրերն առանձնահատուկ ուղղվածություն և ձեռագիր ունեն:

Դրանք ներառում են նորամուծություններ և երկարաժամկետ լուծումներ՝ անհատի, համայնքի ու երկրի բարեկեցության համար:

Գիտակցելով կրթության առանցքային դերը ազգային զարգացման ու բնակչության կենսամակարդակի բարելավման գործընթացում՝ Beeline-ը շարունակաբար աջակցում է կրթական ծրագրերի իրականացմանը և նպաստում կրթական ոլորտի զարգացմանը:



Beeline-ի կրթական ծրագրերը

Beeline-ի՝ կրթության աջակցման ծրագրերը կառուցվում են հետևյալ առանցքների շուրջ՝

1 Անձնային և մասնագիտական զարգացում

«Beeline Scholarship» կրթական ծրագիր

Beeline համակարգչային կենտրոններ

2 Ստեղծագործական ներուժի բացահայտում

Սիվեսի հավաքածուների ցուցադրություն

Վարպետության դասեր

3 Կրթության ներուժի զարգացում համայնքներում

«Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագիր մարզերում

Կրթաթոշակներ ավելի քան 100 ուսանողի համար

Beeline-ը խթանում է կրթության ոլորտում առողջ մրցակցությունը, ինչը նպաստում է ուսման մակարդակի և որակի բարձրացմանը:

2014թ-ին Beeline-ի կարևորագույն կրթական նախաձեռնություններից էր ստարեսկզբին մեկնարկած «Beeline Scholarship» ծրագիրը: Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի և ՅՅ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականացվող այս ծրագրի շնորհիվ ավելի քան 100 ուսանող հնարավորություն է ունեցել մրցակցային հիմունքներով ստանալ Beeline կրթաթոշակ մեկ կիսամյակի ուսման վարձը հոգալու համար: Այս, ինչպես նաև բազմաթիվ այլ ծրագրերի միջոցով Beeline-ը խթանում է կրթության ոլորտում առողջ մրցակցային պայմանների ստեղծումը, ինչն իր հերթին նպաստում է ուսման մակարդակի և որակի բարձրացմանը:

«Beeline Scholarship» ծրագիրն առաջին անգամ անցկացվել է 2013թ-ին և իրականացվել երկու փուլով: Առաջին փուլին մասնակցել է ավելի քան 550 ուսանող, որոնցից 2014թ-ին ընտրվել է 100-ը: Նրանց մեջ գերակշռում են տնտեսագիտության, բիզնեսի կառավարման և լեզվաբանության ոլորտներում սովորող ուսանողները:

Ստեղծագործական ներուժի բացահայտում

Beeline-ը ոգեշնչում է դաստիարակվել և զարգանալ արվեստի հետ շփման միջոցով:

2014թ-ին Beeline-ը շարունակել է աջակցել Գաֆեսճեան արվեստի կենտրոնի կողմից կազմակերպված կրթական ծրագրերին: Այս ծրագրերը նպատակ ունեն զարգացնել մասնակիցների ստեղծագործական մտածողությունը, խթանել երեխաների՝ արվեստն ընկալելու և յուրովի վերարտադրելու կարողությունը՝ նրանց կյանքը դարձնելով ավելի լավը: Beeline-ի հովանավորությամբ Գաֆեսճեան արվեստի կենտրոնում իրականացվել են 5 կրթական նախագծեր՝ «Կախարդական լաբիրինթ», «Քաղաք Հունդերթվասեր», «Ամառային Քանդակների պարտեզ», «Ձնավորիր քո ափսեն» և «Քաղաքն իմ մեջ»: Անցկացվել է նաև երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված տոնական միջոցառում:

Իրականացված ծրագրերի շրջանակում կազմակերպվել են վավերագրական ֆիլմի դիտումներ արվեստագետների կյանքի և գործունեության մասին, շրջայցեր կենտրոնի ցուցասրահներում, ծանոթություն թանգարանում ներկայացված նմուշներին, գաղափարներին և ոճին: Ծրագրի յուրաքանչյուր մասնակից հնարավորություն է ունեցել կենտրոնի մասնագետների աջակցությամբ ստեղծելու իր աշխատանքը:

Ընդհանուր առմամբ, իրականացված նախագծերի շրջանակում կազմակերպվել է 138 միջոցառում, որին մասնակցել է 11000 երեխա:

Ներառական կրթության խթանում

> Կրթվելու և զարգանալու պայմանները պետք է հավասար լինեն յուրաքանչյուր երեխայի համար, սակայն մենք պետք է մի փոքր ավելի ուշադիր լինենք հատուկ կարիքներով երեխաների հանդեպ՝ ապահովելով համապատասխան ուսումնական պայմաններ:

Հայաստանում Beeline–ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

«Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագրի միջոցով Beeline-ը կարևորում է ներառական կրթության զարգացումը Հայաստանում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ համապատասխան ուսումնական պայմանների ապահովումը և ներառական կրթության որակի բարձրացումն առանցքային նշանակություն ունեն հատուկ կարիքներով երեխաների մտավոր ներուժի զարգացման գործընթացում:

Այս ծրագրի հիմնական նպատակն է նպաստել հատուկ կարիքներ ունեցող երեխաների լիարժեք ինտեգրմանը հասարակություն:

2014թ-ի սեպտեմբերին մեկնարկած «Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագրի շրջանակում «Beeline երեխաների զարգացման անկյուններ» են բացվել Արարատ մարզի Այնթափ համայնքի, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի, ինչպես նաև Երևանի դպրոցներում ու մանկապարտեզներում: Նոր բացված կենտրոնները զինվել են հատուկ զարգացնող խաղերով և գրականությամբ, իսկ այն մասնագետներն, ովքեր պետք է աշխատեն կենտրոններում, անցել են վերապատրաստման բարձրակարգ դասընթացներ և խորհրդատվություն:

Beeline-ը շարունակում է աջակցել նաև «Մենք ենք» ներառական թատերախմբին, որի համար անցկացվում են հատուկ միջոցառումներ և արտ-թերապիայի դասընթացներ:

6 կրթական հաստատությունների ավելի քան 40 մասնագետ անցել է վերապատրաստման բարձրակարգ դասընթացներ և խորհրդատվություն: Ծրագրից անմիջականորեն կօգտվի ավելի քան 1000 երեխա:

Աջակցություն վաստակաշատ մանկավարժներին

Beeline-ն ապահովում է կապ և հասանելիություն բոլորի համար

Beeline-ի նախաձեռնության և «Հայաստանի վեռերան մանկավարժների միությանը» ցուցաբերած օժանդակության շնորհիվ ժամանակակից տեխնոլոգիաներն ու բարձրորակ ինտերնետ կապն արդեն ավելի քան 5 տարի հասանելի է մեր երկրի վաստակաշատ մանկավարժներին:

Իրականացված ծրագրի շնորհիվ միության անդամները կարող են շարունակել իրենց կյանքի գործը՝ աշխատել երեխաների և տարբեր երկրների իրենց գործընկերների հետ՝ օգտագործելով ինտերնետ ցանցի ժամանակակից ռեսուրսները և թվային տեխնոլոգիաները:

Դարձ,
Հարնար,
Քեզ համար

Beeline
Կամող
Համարձ

Beeline համակարգչային լսարան ԵՊՀ-ում

Կրթության հասանելիությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով 2014թ-ին Beeline-ը վերանորոգեց ու կահավորեց Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի գրադարանն ու համակարգչային լսարանը:

Ծրագրի շրջանակում Beeline-ը համակարգչային լսարանը վերազինել է բարձրակարգ ժամանակակից համակարգիչներով, ապահովել ծրագրային աջակցությամբ, մոնտաժել ներքին ցանցը: Նոր տրամադրված կահույքի և տեխնիկայի շնորհիվ վերանորոգված գրադարանը դարձել է ուսանելու և ընթերցանության հարմարավետ անկյուն:

4

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Ներկային տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժան մասը և անհրաժեշտ պայման աշխատանքում ու շփման մեջ: Ավելին, այս ոլորտի բուռն զարգացումը Հայաստանում լուրջ ազդեցություն է թողնում անձի ձևավորման ու զարգացման վրա: Մեր ընկերությունը սոցիալական քաղաքականության շրջանակում մեծ նշանակություն է տալիս տեխնոլոգիական զարգացմանը և աջակցում բազմաթիվ միջոցառումների, որոնք նպաստում են այս ոլորտի զարգացմանը:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

SS ոլորտի զարգացում

Beeline-ի սոցիալական ռազմավարության մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն տեխնոլոգիական առաջընթացը խթանող ծրագրերը:

Գիտակցելով SS ոլորտի կարևորությունը երկրի զարգացման գործում՝ Beeline-ն աջակցում է բազում ծրագրերի իրականացմանը՝ ուղղված ոլորտի տաղանդավոր երիտասարդների ներուժի ու նորարարական լուծումների բացահայտմանը:

Beeline-ի տեխնոլոգիական զարգացման ծրագրերը կառուցվում են հետևյալ առանցքների շուրջ՝

Բջջային հայալեզու բովանդակության ստեղծում

- «Mobile Developer Day» համաժողով
- Հայալեզու վիդեո դասընթացների պատրաստում, կրթական անվճար հավելվածի ստեղծում
- App Armenia համակարգի գործարկում

Աջակցություն տեխնոլոգիական նորարարական լուծումների իրագործմանը

- «Դիջիքամպի» ձեռներեցության ճամբար
- Դիջիթեք Բիզնես ֆորում 2014
- էլ. տոմսերի համակարգով մշակութային պորտալի գործարկում

Beeline-ը՝ «Mobile Developer Day» համաժողովի հովանավոր

Beeline-ն իրականացնում է հայաստանյան բջջային հավելվածների և բովանդակության զարգացման ծրագրեր: Այս տարվա ընթացքում մենք գործարկել ենք մի քանի հայերեն բջջային հավելվածներ՝ նախատեսված հայախոս հասարակությանը:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

2014թ-ին Beeline-ն աջակցեց «Տեխնոլոգիական Զարգացման Կենտրոն» հիմնադրամի կազմակերպած «Mobile Developer Day» խորագրով գործնական համաժողովին: Համաժողովի միջոցով Beeline-ը նպատակ ուներ խթանել տեղական բջջային բովանդակության զարգացումը՝ ներգրավելով ոլորտի առաջատար մշակող ծրագրավորողների և բիզնեսի ներկայացուցիչների:

Գործնական համաժողովի մասնակիցները մշակեցին համագործակցության հիմնական պլան՝ ապահովելու տեղական, այդ թվում նաև հայաստանյան բջջային բովանդակության հանդեպ աճող պահանջարկը: Beeline-ի շարունակական աջակցության շնորհիվ արդեն իսկ մշակվել են գործարկման պատրաստ տեղական բջջային հավելվածներ:

Կրթական անվճար բջջային հավելվածի ստեղծում

Beeline-ը նորարարական մեթոդների կիրառման միջոցով ուսումնական գործընթացը դարձնում է ավելի հարմարավետ ու հետաքրքիր:

Կարևորելով հայալեզու բջջային բովանդակության ստեղծումը երեխաների դասավարության գործում 2014թ-ին Beeline-ն աջակցեց հայալեզու վիդեո դասընթացների պատրաստմանը, ինչպես նաև Windows Phone համակարգով աշխատող բջջային հեռախոսների համար նախատեսված կրթական անվճար հավելվածի մշակմանը: Մայքրոսոֆթի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացված այս նախաձեռնության նպատակն էր կրթությունն ավելի հասանելի ու մատչելի դարձնել:

Հայալեզու վիդեո դասընթացները պատրաստվել և ձայնագրվել են տարբեր դասարանների առարկաների և թեմատիկ դասերի պաշտոնական ուսումնական պլանի համաձայն: Դասավանդման նորարար և մատչելի մեթոդները պատրաստվել են Հայաստանի լավագույն ուսուցիչների օգնությամբ՝ հիմնվելով հավելյալ տեղեկատվական նյութերի և Մայքրոսոֆթի կրթական գործիքների վրա: Ծրագիրը թույլ է տալիս բեռնել համապատասխան դասի ձայնագրությունը հեռախոսի մեջ՝ ինտերնետի բացակայության դեպքում այն դիտելու համար: Ծրագիրը հասանելի է «Windows Store»-ում:

App Armenia համակարգի գործարկում

Beeline-ը խրախուսում է երիտասարդների ներգրավվածությունը հայալեզու բջջային հավելվածների ստեղծման գործընթացում:

2014թ-ին Beeline-ի՝ բջջային հայալեզու բովանդակության զարգացմանն ուղղված կարևորագույն նախաձեռնություններից էր Տեխնոլոգիական զարգացման կենտրոնի հետ համատեղ մշակված App Armenia համակարգը:

App Armenia-ն բջջային հավելվածների և մոբայլ նախագծերի համար նախատեսված հարթակ է՝ բաղկացած Web և Mobile մասերից: App.am կայքում օգտատերերը կարող են գրանցվել, ստեղծել էջ և ներկայացնել սեփական պատառները կամ ձայնային ֆայլերը, իսկ բջջային հավելվածի միջոցով՝ իրենց սմարթֆոններում օգտագործել App.am կայքի ամբողջ բովանդակությունը: App.am կայքում հրապարակվում են նաև բջջային հավելվածների մասին նորություններ և նյութեր: App Armenia բջջային հավելվածը հասանելի է Android և iOS համակարգերով հեռախոսների համար: Այն կարելի է ներբեռնել Google Play Store և App Store մարքեթներից:

«Դիջիքամփ» ձեռներեցության ճամբար

Beeline-ը նպաստում է տեխնոլոգիական ձեռներեցության զարգացմանը:

2014թ-ին Beeline-ի հովանավորությամբ կայացավ «Դիջիքամփ» ձեռներեցության 2-րդ ամենամյա ամառային ճամբարը՝ կազմակերպված Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) կողմից: Ծրագրի միջոցով Beeline-ը նպաստավոր կրթական միջավայր է ստեղծում 88 ոլորտում ներգրավված 16-25 տարեկան երիտասարդների համար և օժանդակում նրանց բիզնես գաղափարների իրագործմանը:

«Դիջիքամփ» ճամբարին մասնակցել է 40 երիտասարդ: Ճամբարի մասնակիցները հնարավորություն են ունեցել փորձագետների խորհրդատվության, գործարարների և թիմային աշխատանքի շնորհիվ կատարելագործել իրենց ծրագրերը: Հանձնաժողովի որոշմամբ ճամբարի հաղթող է ճանաչվել 3 մասնակից: Հաղթող թիմերին հնարավորություն է ընձեռվել մասնակցելու հոկտեմբերի 3-5 ը կայացած Դիջիթեք 2014 տասներորդ հոբելյանական միջազգային տեխնոլոգիական գագաթնաժողովին: Բոլոր հաղթողներն արժանացել են դրամական պարգևների, իսկ ճամբարի բոլոր մասնակիցներին հանձնվել են Դիջիքամփ 2014-ի հավատագրեր:

Beeline-ը՝ Դիջիթեք Բիզնես 2014 ֆորումի հովանավոր

Beeline-ն աջակցում է տեխնոլոգիական լավագույն գաղափարների իրագործմանը:

2014թ-ին Beeline-ն աջակցեց «Խելացի լուծումներ խելացի բիզնեսի համար» կարգախոսի ներքո իրականացվող Դիջիթեք Բիզնես ֆորումին: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) հետ համատեղ անցկացված ֆորումի միջոցով Beeline-ը լավագույն նորարարական լուծումները մեկ տեղում ներկայացնելու, ինչպես նաև ՏՏ ոլորտի ընկերությունների և հաճախորդների միջև ծանոթացման հարթակ ստեղծելու նպատակ ուներ:

Ֆորումին ներկայացված էին հայկական, ռուսական և վրացական շուրջ 50 ընկերությունների կողմից առաջարկված լուծումներ: Beeline-ը ֆորումին ներկայացրեց «BlackBerry Enterprise Service» 10 (BES) ծառայությունը, որը հնարավորություն է տալիս սմարթֆոնի միջոցով հասանելի դարձնել գործարար տեղեկատվությունը, աշխատել հաճախորդի կորպորատիվ էլեկտրոնային փոստի համակարգի և ներքին կորպորատիվ հավելվածների հետ: BES 10-ն ապահովում է ավյալների փոխանցման լիարժեք գաղտնիություն: Ֆորումին ներկայացվեցին նաև կոմերցիոն զանգերի կենտրոնը, «My Beeline Armenia» բջջային հավելվածը և մի շարք այլ նորարարական լուծումներ:

Էլ. տոմսերի համակարգով մշակութային պորտալի գործարկում

Beeline-ը տեխնոլոգիական հետաքրքիր լուծումներ առաջարկելու միջոցով կյանքը դարձնում է ավելի լավը:

2014թ-ին Beeline-ի օժանդակությամբ Հայաստանում գործարկվեց www.cult.am մշակութային միասնական պորտալը: «Դինամիկա թեսթինգ սենթր»-ի հետ համատեղ իրականացված այս ծրագրի նպատակն էր որակապես նոր, ավելի հարմարավետ տեխնոլոգիաների միջոցով նպաստել մշակութային առօրյայի կազմակերպմանը:

Համակարգը ներառում է տեղեկություններ մայրաքաղաքում անցկացվող մշակութային միջոցառումների վերաբերյալ և այլ հարթակներից տարբերվում է առցանց էլեկտրոնային տոմսերի ձեռքբերման հնարավորությամբ: Beeline-ի կողմից արտադրված համակարգիչների և սմարթֆոնների շնորհիվ համակարգին են միացել և իրենց միջոցառումների էլեկտրոնային տոմսերը մշակութասեր հասարակությանն են առաջարկում թվով տասը երևանյան թատրոններ: Համակարգը թույլ է տալիս նախընտրելի տեղերի ընտրությամբ ձեռք բերել կոնկրետ միջոցառման տոմսեր և առցանց վճարում կատարել: CULT.am-ը 2013թ-ին հաղթող է ճանաչվել հայկական վեբ-նախագծերի ArmNet Awards ամենամյա հեղինակավոր մրցույթում՝ արժանանալով «Տարվա առաջընթաց» անվանակարգին:

ՊԱՅԾԱՌ ԱՊԱԳԱ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Beeline-ը կարևորում և օժանդակում է այն ծրագրերի իրականացմանը, որոնք օգնում են երեխաներին և երիտասարդներին փոխել իրենց կյանքը դեպի ավելի լավը:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն
Անդրեյ Պյատախին

Երեխաների աջակցման ծրագրեր

Կարևորելով առողջ ու զարգացած սերնդի դերը ապահով ու բարեկեցիկ ապագա ունենալու մեջ՝ Beeline-ն աջակցում է երեխաների բարեկեցությանն ուղղված տասնյակ ծրագրերի իրականացմանը:

Դրանք առաջարկում են երեխաների սոցիալական, կրթական և առողջական խնդիրներին առնչվող երկարատև ու արդյունավետ լուծումներ:

Beeline-ի՝ երեխաների աջակցման ծրագրերը կառուցվում են հետևյալ առանցքների շուրջ՝

1

Ծրագրեր մարզերի երեխաների համար

«Հայրենիքի դարպասներ» ծրագիր
Աջակցություն Արմավիրի մարզի Հենիկ համայնքի մանկապարտեզին
Գյուղաբնակ երեխաների արհեստագործական հմտությունների զարգացում

2

Ներառական կրթության ծրագրեր

Beeline զարգացման անկյուններ Երևանում և մարզերում
«Այսօրվա աշխարհը երեխաների աչքերով» միջոցառում Գորիսում

3

Երեխաների առողջության պահպանման ծրագրեր

Դոնորական արյան տրամադրման միջոցառումներ

Նվեր սահմանամերձ Երվանդաշատ գյուղի երեխաներին

Beeline-ի սոցիալական ռազմավարության առանցքային ուղղություններից է ծրագրերի իրականացումը սահմանամերձ շրջաններում: Ուրախ ենք, որ կարողանում ենք սահմանամերձ գյուղերի երեխաներին պարգևել անհամար ժպիտներ, վառ տպավորություններ և դարձնել նրանց կյանքն ավելի լավը:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն
Անդրեյ Պյատախին

2014թ-ին Beeline-ի կարևորագույն նախաձեռնություններից էր Mothercare և Promoto ընկերությունների հետ համատեղ իրականացված սոցիալական ծրագիրը սահմանամերձ Երվանդաշատ գյուղի երեխաների համար:

Ծրագրի շրջանակում գյուղի մինչև 10 տարեկան բոլոր երեխաները նվերներ ստացան խաղալիքներ և հագուստ, իսկ Համայնքի գրադարանին նվիրաբերվեցին հայոց պատմության և արվեստի մասին նոր գրքեր:

Աջակցություն Տավուշի մարզի երեխաներին

Beeline-ը հավասար պայմաններ է ստեղծում Հայաստանի երեխաների զարգացման և բարօրության համար:

2014թ-ին Beeline-ը շարունակեց համագործակցել «Հայրենիքի դարպասներ» սոցիալական հասարակական կազմակերպության հետ՝ կյանքի կոչելով սահմանամերձ համայնքների զարգացմանն ուղղված ծրագրի հետագա փուլերը: Ծրագրի շրջանակում Beeline-ի հովանավորությամբ Տավուշի մարզի Չինարի և Ոսկեպար սահմանամերձ գյուղերում կառուցվեցին խաղային ու սպորտային հրապարակներ: Տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված հրապարակներում տեղադրվեցին ճոճանակներ, կարուսելներ, մարզասարքեր, տաղավարներ և նստարաններ:

«Հայրենիքի դարպասներ» սոցիալական ՀԿ-ի հետ Beeline-ը համագործակցում է 2013թ-ից: «Հայրենիքի դարպասներ» ծրագրի շրջանակում իրականացվել են նաև «Երկու օր հեքիաթում» և «Նվեր Երվանդաշատ գյուղի երեխաներին» ծրագրերը:

2013թ-ի հուլիսին «Երկու օր հեքիաթում» ծրագրի շրջանակում Չինարի գյուղի ավելի քան 50 աշակերտներ այցելեցին Երևան՝ հյուրընկալվելով մանկական և զվարճանքի տարբեր կենտրոններ, եղան «Beeline կապի թանգարանում», ծանոթացան հեռահաղորդակցության խոշորագույն օպերատորի աշխատանքներին, ինչպես նաև այցելեցին հաճախորդների սպասարկման կենտրոն:

Աջակցություն Արմավիրի մարզի Շենիկ համայնքի մանկապարտեզին

Beeline-ն աջակցում է մարզաբնակ երեխաների համար ապահով սոցիալական միջավայրի ստեղծմանը:

Երեխաների հանգստի և զարգացման հնարավորությունները բարելավելու նպատակով 2014թ-ին Beeline-ը Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) հետ համատեղ իրականացրեց «Աջակցություն Արմավիրի մարզի Շենիկ համայնքի մանկապարտեզին» ծրագիրը:

Բարեկարգման աշխատանքներ տարվեցին Շենիկ համայնքի մանկապարտեզում. մասնավորապես կահավորվեցին և անկողնային պարագաներով համալրվեցին երեխաների հանգստի սենյակները: Բացվեց նաև նոր խաղահրապարակ մանկապարտեզ հաճախող երեխաների համար: Մանկապարտեզի պայմանների բարելավման շնորհիվ ավելի մեծ թվով երեխաներ կհաճախեն մանկապարտեզ, ինչը թույլ կտա գյուղաբնակ մայրերին աշխատել և իրենց ներդրումն ունենալ իրենց ընտանիքների և համայնքի զարգացման մեջ:

Գյուղաբնակ երեխաների արհեստագործական հմտությունների զարգացում

Beeline-ը ոգեշնչում է երեխաներին արհեստն ընկալել և կիրառել որպես եկամտի և բարեկեցության հնարավոր աղբյուր:

2014թ-ին իրականացված «Գյուղաբնակ երեխաների շրջանում արհեստագործության զարգացում» ծրագրի միջոցով Beeline-ը կարևորում է երեխաների համար նոր հնարավորությունների ստեղծումը դեպի ապահով ապագա:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ»-ի հետ համատեղ այս ծրագրի շրջանակում գործարկվել է արհեստագործական 4 խմբակ, որտեղ Մյասնիկյան, Քարակերտ, Դալարիկ և Մրագածովան համայնքների դպրոցների աշակերտները սովորում են մարզերում պահանջված արհեստագործական մասնագիտություններ: Քարակերտ համայնքում անցկացվել է նաև ծրագրին մասնակցած երեխաների ձեռագործ աշխատանքների ցուցահանդես:

Ամանորի հեքիաթ

Երեխաների ամենասիրած տոնի նախաշեմին մենք նրանց հույս և հավատ, մարդկային հոգատարություն և բարություն պարգևեցինք՝ դարձնելով նրանց կյանքն ավելի լավը:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

2014թ-ին Beeline-ը երրորդ տարին շարունակ աջակցեց «Նաղաշյան Մանուկների տան» սաներին՝ իրականություն դարձնելով նրանց Ամանորի երազանքը:

«Նամակ Ձմեռ պապիկին» միջոցառման շրջանակում Beeline-ի աշխատակիցները՝ Ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինի գլխավորությամբ, իրենց սեփական միջոցներով ուրախացրին երեխաներին նվերներով և պարգևեցին նրանց հեքիաթային հանգիստ Ծաղկաձորում: Beeline-ը նախկինում ևս իրականացրել է բազմաթիվ բարեգործական միջոցառումներ կենտրոնի սաների համար՝ ապահովելով նրանց Bi-Line ինտերնետով և նպաստելով համակարգչային գրագիտության ընդլայնմանը:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում

Beeline-ը երեխաների ժամանցը դարձնում է գունեղ ու հեքիաթային:

2014թ-ի հունիսի 1-ին Beeline-ի հովանավորությամբ Գաֆեսճեան քանդակների պարտեզում կայացավ երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում, որի միջոցով Beeline-ը երեխաների համար հետաքրքրաշարժ և ուրախ միջավայր ստեղծեց:

Միջոցառման ընթացքում երեխաները մասնակցեցին ստեղծագործական խմբակների և ժամանցային ծրագրերի, իսկ հեքիաթների սիրված հերոսները փոքրիկներին վառ ու գունեղ պատվորություններ պարգևեցին:

Օժանդակություն առողջական խնդիրներով երեխաներին

Beeline-ը նպաստում է երեխաների առողջ ապագայի կառուցմանը:

Կարևորելով դոնորական ակցիաների կենսական դերը մանուկների առողջացման գործում՝ Beeline-ի աշխատակիցները դարձել են դոնորների շարժման մեծ խթան և օգնական:

2014թ-ին Beeline-ի ավելի քան 30 աշխատակից «Պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան Արյունաբանական Կենտրոն»-ում արյուն հանձնեց կենտրոնում բուժում ստացող երեխաներին օգնելու համար: Կենտրոնի անձնակազմը Beeline-ի աշխատակիցներին պարգևատրեց արյան կամավոր դոնորության կրծքանշանով:

Երկրում արյան փոխներարկման կարիքները հոգալու համար, ըստ կենտրոնի մասնագետների, անհրաժեշտ է, որ 1000 մարդուց 40-ը կանոնավոր արյուն հանձնեն: Այսօր Հայաստանում կա մոտ 12 հազար գրանցված դոնոր, որոնցից միայն 4.7 տոկոսն է կանոնավոր արյուն հանձնում:

Beeline-ի աշխատակիցները կանոնավոր կերպով մասնակցում են արյան հանձնման կամավոր ակցիային: Նման ակցիաներն Ընկերությունում անցկացվում են տարին մեկ անգամ:

«Այսօրվա աշխարհը երեխաների աչքերով» միջոցառում

2014թ-ի նոյեմբերի 7-ին «Գիտելիք հանուն բարեկեցության» ծրագրի շրջանակում Beeline-ը Մանկական զարգացման հիմնադրամի հետ միասին հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար Գորիս քաղաքում անցկացրեց «Այսօրվա աշխարհը երեխաների աչքերով» միջոցառում:

Միջոցառումը մեկնարկեց «Ամեն ինչ սկսվում է խաղաղությունից» նկարչական ցուցահանդեսով, որից հետո տեղի ունեցավ թատերական ներկայացում Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի և Վազգեն Սարգսյանի անվան մանկապարտեզի սաների մասնակցությամբ: Այնուհետև աշակերտները շարադրությունների մրցույթում հաղթած լավագույն աշխատանքներից հատվածներ ներկայացրին:

«Այսօրվա աշխարհը երեխաների աչքերով» միջոցառմանը մասնակցեց ավելի քան 400 երեխա, իսկ հատուկ հանձնաժողովի կողմից ընտրված լավագույն շարադրությունների և նկարների հեղինակները պարգևատրվեցին խրախուսական մրցանակներով:

Մշակույթ

Մշակութային ծրագրերը մշտապես գտնվում են Beeline-ի սոցիալական ռազմավարության կենտրոնում: Աջակցելով մշակութային ծրագրերի իրականացմանը՝ մենք հայտնաբերում ենք երիտասարդ նոր անուններ, ովքեր իրենց տաղանդով և ժամանակակից հայացքներով նոր շունչ են հաղորդելու հայկական մշակույթին:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

Որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ Beeline-ն իր շարունակական ներդրումն ունի մշակույթի զարգացման գործում: Beeline-ն օժանդակում է տարբեր տարիքային ու սոցիալական խմբերի համար նախատեսված տասնյակ մշակութային ծրագրերի իրականացմանը:



Beeline-ի մշակութային ծրագրերը

Beeline-ի մշակութային ծրագրերը կառուցվում են հետևյալ առանցքների շուրջ՝

1 Միջմշակութային կապերի հաստատում

Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոն
Կարճամետրաժ ֆիլմերի միջազգային երիտասարդական փառատոն

2 Ներառական խնդիրների լուծում

Ներառական կինոյի 60 վայրկյանները
«Մեզ հետ, մեր կողքին» ֆոտոմրցույթ

3 Մարզերում մշակութային ծրագրերի իրականացում

Վարպետության դասընթացներ և համերգներ մարզերում
Արտանիշ համայնքի մշակութային համալիրի վերանորոգում

Beeline-ը՝ Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոնի գլխավոր հովանավոր

Beeline-ը կարևորում է միջմշակութային կապերի հաստատումն ու ընդլայնումը:

2014թ-ին Beeline-ն աջակցեց Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոնի անցկացմանը Երևանում և Հայաստանի մարզերում: Բրիտանական խորհրդի, Երևանում բրիտանական դեսպանատան և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայկական ներկայացուցչության հետ համատեղ իրականացված այս նախաձեռնությունը նվիրված էր հայ հասարակությունում առկա ներառական և հաղորդակցության խնդիրներին:

Փառատոնի շրջանակում ցուցադրվեց 9 ֆիլմ Երևանում, Գորիսում, Գավառում և Գյումրիում: Ցուցադրությունները հյուրընկալեցին ավելի քան 10000 հանդիսատեսի:

«Ներառական կինոյի 60 վայրկյանները» մրցույթ

Beeline-ը ոգեշնչում է պատանիներին ստեղծագործել և զարգացնել հայրենական կինոարվեստը:

Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոնի շրջանակում Beeline-ի հովանավորությամբ անցկացվեց «Ներառական կինոյի 60 վայրկյանները» մրցութային ծրագիրը:

Նախքան մրցույթի մեկնարկը Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոնի հատուկ հյուր և «Պարզամիտ Ջիմը» ֆիլմի ռեժիսոր Մեթ Հալսը դասընթացներ է անցկացրել մրցույթի մասնակիցների համար: Երեք օրվա ընթացքում բրիտանացի կինոռեժիսորը պատանիներին սովորեցրել է ֆիլմերում ներառության թեմայի արտահայտման նրբությունները, ինչպես նաև ներկայացրել ֆիլմի գաղափարն ընդամենը 60 վայրկյանի ընթացքում ներկայացնելու հմտությունը:

Մրցույթի միջոցով Beeline-ն օգնեց պատանիներին ծանոթանալ կինոարվեստի և կինոյի ստեղծման նրբություններին, իսկ հետագայում ձեռքբերված գիտելիքը կիրառել ի նպաստ հայրենական կինոարվեստի զարգացման:

Մրցույթը կազմակերպվել էր Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի սաների համար: Լավագույն աշխատանքի հեղինակները պարգևատրվեցին Sony Xperia E C1505 սմարթֆոններով:

«Մեզ հետ, մեր կողքին» ֆոտոմրցույթ

Մշակույթի միջոցով Beeline-ը սատարում է խոցելի խմբերին՝ նրանց կյանքը դարձնելով ավելի լավը:

Աջակցելով «Մեզ հետ, մեր կողքին» ֆոտոմրցույթին՝ Beeline-ը նպատակ ուներ հանրության ուշադրությունը կենտրոնացնել խոցելի խմբերի, նրանց կարիքների վրա և նպաստել նրանց ինտեգրմանը հասարակություն: Մրցույթի շրջանակում հաշմանդամության թեման բարձրացնելը ևս մեկ առիթ էր, որպեսզի ավելի շատ մարդիկ հետաքրքրվեին և ուշադրություն դարձնեին մեր կողքին ապրող խոցելի խմբերին:

Մրցույթին ներկայացվեց 58 լուսանկար: Հաղթող մասնակիցը որպես պարգև ստացավ լուսանկարչական սարք, իսկ մյուսներն արժանացան խրախուսական մրցանակների:

Գրախոսական արվեստի խթանում

Beeline-ը ոգեշնչում է երիտասարդներին ընդլայնել մտահորիզոնը:

2014թ-ին Beeline-ի աջակցությամբ անցկացվեց ֆիլմերի լավագույն գրախոսականի մրցույթը: Այս նախաձեռնության միջոցով Ընկերությունը նպաստում է երկրում գրախոսական արվեստի զարգացմանը և երիտասարդների շրջանում առողջ մրցակցային պայմանների ստեղծմանը:

Մրցույթին ներկայացվել է 32 գրախոսական աշխատանք: Լավագույն գրախոսականներին ընտրել են Կինոքննադատների և կինոլրագրողների հայկական ասոցիացիայի անդամները: Մրցույթի հաղթողը պարգևատրվեց Apple iPad պլանշետով, ԵՒս երկու մասնակիցներ արժանացան հատուկ մրցանակների:

Դասական երաժշտության զարգացում

Beeline-ի սոցիալական ծրագրերի հիմնական նպատակն է կյանքը դարձնել ավելի լավը: «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամի հետ համագործակցությունն այս կարգախոսի իրականացման վառ օրինակներից է:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Ցնօրեն Մնդրեյ Պյատախին

Կարևորելով դասական երաժշտության դերը երկրի մշակութային ներուժի զարգացման գործում՝ Beeline-ը շարունակում է աջակցել «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամին և Էդուարդ Միրզոյանի անվան լարային քառյակին:

Beeline-ի աջակցությամբ «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամն իրականացնում է վարպետության դասեր և համերգներ Հայաստանի մարզային երաժշտական դպրոցներում:

Beeline-ի և «Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամի համագործակցության շրջանակում իրականացվել է 70 համերգ և 25 վարպետության դաս՝ նվիրված դասական երաժշտության ատրածմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ներկայի համերգներին ներկա է եղել ավելի քան 15.000 հանդիսատես, իսկ վարպետության դասերին՝ երաժշտական դպրոցների և բուհերի 150-ից ավել աշակերտ և ուսանող:

Beeline-ի աջակցության շնորհիվ երաժշտական դպրոցների սաները ձեռք են բերում փորձ և գիտելիքներ, ստանում նոր գործիքներ, իսկ ամենատաղանդաշատ երեխաները՝ կրթաթոշակներ: Երաժիշտներից յուրաքանչյուրը մեծ ավանդ ունի հիմնադրամի շնորհալի երիտասարդների կրթման գործում՝ օգնելով երաժշտական դպրոցների սաներին ձեռք բերել գիտելիքներ և փորձ անմիջապես նշանավոր արվեստագետներից:

2014թ-ին Beeline-ի հովանավորությամբ Վանաձորի Հովսեփյանի անվան արվեստի դպրոցում տեղի ունեցավ հիմնադրամի սաների համերգը, իսկ Էդուարդ Միրզոյանի քառյակը համերգներով հանդես եկավ Հայաստանում և արտերկրում՝ արժանանալով բազմաթիվ մրցանակների ու պարգևների:

Beeline-ը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում արվեստին: Ուշադրության կենտրոնում են հատկապես տաղանդավոր երիտասարդները, ովքեր արժանապատվորեն կշարունակեն հայկական դասական երաժշտության ավանդույթները: 2014թ-ին կատարված աշխատանքի արդյունքները նպաստում են երիտասարդ սերնդի մշակութային զարգացմանը:

Մարզերում մշակութային ներգրավվածության ապահովում

Մարզերը մշտապես գտնվում են մեր ուշադրության կենտրոնում: Որպես սոցիալապես պատասխանատու օպերատոր՝ մեր մասնակցությունն ունենք շրջաններում առկա կրթական, բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծման գործում:

Հայաստանում Beeline–ի Գլխավոր Տնօրեն
Անդրեյ Պյատախին

2014թ-ին Beeline-ի նախաձեռնությամբ վերանորոգվեց Արտանիշ համայնքի մշակութային համալիրի տանիքը:

Վերանորոգման շնորհիվ շենքն ամբողջովին նոր տեսք է ստացել և վերստին կարող է ծառայել համայնքի բնակիչներին: Կառույցը համայնքի միակ մշակութային կենտրոնն է, որտեղ գործում է գրադարան, ակումբ և միջոցառումների դահլիճ:

Հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ

Որպես պատասխանատու օպերատոր՝ Beeline ընկերությունը կարևորում է բնապահպանական հարցերը: Հոգատար վերաբերմունքը բնական պաշարների հանդեպ և մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանմանը մեր բիզնեսի փիլիսոփայությունն է:
Մենք շարունակելու ենք իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք մեր կյանքը ավելի գեղեցիկ և լավը կդարձնեն:

Հայաստանում Beeline-ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

Հրջակա միջավայրի պահպանման ծրագրեր

Հրջակա միջավայրի պահպանման ոլորտում Beeline-ն ունի հստակ ձևավորված քաղաքականություն և գործելաոճ: Beeline-ի ծրագրերը ներառում են նորամուծություններ, միջազգային փորձի կիրառում ու լայնընդգրկուն գործողություններ, որոնցում ներգրավված են թե՛ ընկերության աշխատակիցները և թե՛ շահագրգիռ խմբեր:

Beeline-ի՝ շրջակա միջավայրի պահպանման ծրագրերը կառուցվում են հետևյալ առանցքների շուրջ՝

1

Շրջակա միջավայրի բարեկարգում

Մասնակցություն շաբաթօրյակների և ծառատունկերի

2

Իրազեկում շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ

«Դեպի կանաչ անտեսություն» ազգային համաժողով

Միջավայրի բարեկարգման աշխատանքներ

Beeline-ը ոգեշնչում է ապրել ու գործել մաքուր ու կանաչ միջավայրում:

2014թ-ի ընթացքում Beeline ընկերության ավելի քան 500 աշխատակիցներ մի քանի անգամ մասնակցեցին համաքաղաքային շաբաթօրյակին, տնկեցին ծառեր և աղբից մաքրեցին ընկերության տեխնիկական ու վարչական գրասենյակներին հարակից փողոցներն ու բակերը: Բարեկարգման աշխատանքներ տարվեցին նաև Երևանի տարբեր թաղամասերում ու մարզերում գտնվող Ընկերության բոլոր շինությունների, անալոգային հեռախոսային կայանների, ինչպես նաև վաճառքի ու սպասարկման գրասենյակների շրջակայքում:

Beeline-ի բնապահպանական նախաձեռնություններն արժանացել են հասարակության բարձր գնահատականին:

Արդեն երկրորդ անգամ Beeline-ը ճանաչվել է երկրի էկոլոգիապես ամենապատասխանատու ընկերություն: Նման կոչում Beeline-ին շնորհվել է Հայաստանում «Կանաչ տնտեսության» խթանման, լավագույն փորձի, «կանաչ» ծրագրերի իրականացման և դրանց շարունակական աջակցման համար: Հավաստագիրը շնորհել է Հայաստանի գործատուների հանրապետական միությունը՝ հիմք ընդունելով ՀԳՀՄ-ի կողմից մշակված 12 չափանիշները՝ մասնավորապես շրջակա միջավայրի պահպանում, հաստատության ներսում կիրառվող սոցիալ-աշխատանքային կանոններ, արտադրական թափոնների հետագա տնօրինման մեխանիզմներին համապատասխան ISO ստանդարտի առկայություն, բնապահպանական վճարների մուծման պարտաճանաչություն, ուսումնական ծրագրերի իրականացում և այլն:

2013թ-ին կայացած «Կանաչ տնտեսություն և կանաչ աշխատատեղեր» մրցույթին Beeline-ը ճանաչվել է ամենապատասխանատու բնապահպանական կազմակերպությունը: Մրցույթն անցկացվում է ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, արհմիությունների միության և Հայաստանի գործատուների միության կողմից:

Դեպի կանաչ տնտեսություն

> Ուրախ ենք, որ օրեցօր Հայաստանում ավելանում է բնապահպանության հարցերին հատուկ ուշադրություն դարձնող ընկերությունների թիվը: Միջազգային և տեղական ընկերությունների փորձի և հմտությունների համախմբման միջոցով մենք բոլորս կնպաստենք ապագա սերնդի համար բարեկեցիկ պայմանների ստեղծմանն ու պահպանմանը:

Հայաստանում Beeline–ի Գլխավոր Տնօրեն Անդրեյ Պյատախին

Կարևորելով «կանաչ» տնտեսության քաղաքականության խթանումը Հայաստանում՝ 2014թ-ին Beeline-ն աջակցել է «Դեպի կանաչ տնտեսություն» երրորդ ազգային համաժողովի անցկացմանը: Համաժողովի նպատակն էր բարձրացնել ՀՀ գործող ընկերությունների իրազեկվածությունը շրջակա միջավայրի պահպանման, թափոնների և արտանետումների գործընթացների կարգավորման, ռեսուրսախնայողության, ինչպես նաև «կանաչ» տնտեսության և «կանաչ» ձեռնարկությունների էշելոնի ստեղծման վերաբերյալ:

Համաժողովի ընթացքում քննարկվեցին փոքր և միջին ձեռնարկություններում «կանաչ» գործունեության խթանման ձևաչափերը և նորարար ձեռնարկությունների ստեղծումը՝ որպես ռեսուրսների խնայողության, մրցունակ և անթափոն արտադրության կարևոր մեխանիզմ: Մասնակիցներին ներկայացվեց նաև միջազգային և տեղական լավագույն փորձը, ինչպես նաև այդ փորձի կիրառման արդյունավետ մեխանիզմները:

Beeline-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր 2014թ.

Կրթություն

Նկարագրություն	Անցկացման վայրը
Beeline Scholarship	ՀՀ-ի ողջ տարածքում
Beeline համակարգչային լսարան ԵՊՀ-ում	Երևանի պետական համալսարան
Կրթադաստիարակչական ծրագրեր Գաֆեսճեան արվեստի կենտրոնի հետ	Երևան
«Ձեր ուժեղ կողմերը Ձեր անձնական բրենդն են» թեմայով դասախոսություն	Երևան
«Գիտելիք՝ հանուն բարեկեցության»	Երևան, Արարատի, Կոտայքի, Սյունիքի մարզեր
«Այսօրվա աշխարհը երեխաների աչքերով»	Սյունիքի մարզ՝ Գորիս ք.

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Նկարագրություն	Անցկացման վայրը
«Mobile Developer Day» համաժողով	Կոտայքի մարզ՝ Ծաղկաձոր ք.
Դիջիթեք Բիզնես Ֆորում	Երևան
«Դիջիքամփ» ձեռներեցության ամառային ճամբար	Գեղարքունիքի մարզ՝ Ծաղկունք համայնք
Կրթական անվճար բջջային հավելված	Երևան
Էլեկտրոնային տոմսերի լիարժեք համակարգով մշակութային միասնական պորտալ	Երևան
App Armenia համակարգ	Երևան

Երեխաների սատարման ծրագրեր

Նկարագրություն	Անցկացման վայրը
«Հայրենիքի դարպասներ»	Արմավիրի մարզ՝ Երվանդաշատ գյուղ, Տավուշի մարզ՝ Չինարի և Ոսկեպար գյուղեր
Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում	Երևան
Դոնորական ակցիա	«Պրոֆ. Ռ.Հ. Յոլյանի անվան Արյունաբանական Կենտրոն», Երևան
«Beeline երեխաների զարգացման անկյուններ»	Երևան, Կոտայքի մարզ՝ Չարենցավան և Աբովյան քաղաքներ, Արարատի մարզ՝ Այնթափ և Նոր Խարբերդ համայնքներ
«Գյուղաբնակ երեխաների շրջանում արհեստագործության զարգացում»	Մյասնիկյան, Քարակերտ, Դալարիկ և Արագածավան համայնքներ
«Աջակցություն Արմավիրի մարզի Ճենիկ համայնքի մանկապարտեզին»	Ճենիկ համայնք՝ Արմավիրի մարզ
«Նամակ Զմեռ պապիկին»	«Նաղաշյան Մանուկների տուն», Երևան

Մշակույթ

Նկարագրություն	Անցկացման վայրը
Բրիտանական ֆիլմերի 12-րդ փառատոն	Երևան, Գավառ, Գորիս և Գյումրի քաղաքներ
«Ներառական կինոյի 60 վայրկյանները» մրցույթ	Երևան՝ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն
«Մեզ հետ, մեր կողքին» ֆոտոմրցույթ	Երևան
Լավագույն գրախոսականի մրցույթ	ՀՀ-ի ողջ տարածքում
«Դասական երաժշտության զարգացման» հիմնադրամի սաների համերգ, վարպետության դասեր	ՀՀ-ի ողջ տարածքում
«Ավանգարդ» կարճամետրաժ ֆիլմերի միջազգային երիտասարդական փառատոն	ՀՀ-ի ողջ տարածքում
Արտանիշ համայնքի մշակութային համալիրի շենքի վերանորոգում	Արտանիշ՝ Գեղարքունիքի մարզ

Շրջակա միջավայր

Նկարագրություն	Անցկացման վայրը
Համաքաղաքային ծառատունկ և շաբաթօրյակ	Երևան, մարզեր
Համաքաղաքային շաբաթօրյակ	Երևան, մարզեր
«Դեպի կանաչ տնտեսություն» երրորդ ազգային համաժողով	Երևան

Beeline | 2014 | Երևան

© 2015 | Բոլոր իրավունքները պաշտպանված են | Beeline Հայաստան
Ձևավորումը՝ Deem Communications-ի